*Հավելված 7*
*ՀՀ ֆինանսների նախարարի << 02 >> օգոստոսի 2013թ.*
*թիվ 667-Ա հրամանի*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2014 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՇՄ ԲՄԴ-2 »

Պատվիրատուն՝ ՀՀ Շիրակի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը,որը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի գյուղ Բավրա հասցեում, ստորև ներկայացնում է *«ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՇՄ ԲՄԴ-2 »* ծածկագրով ՇՀ ընթացակարգի հրավերի փոփոխությունների պատճառը և փոփոխությունների համառոտ նկարագրությունը:

**Փոփոխության պատճառ 1 `**պայմանագրի նախագծի 9-րդ կետի 9.4 ենթակետում առկա թերություններ:

**Փոփոխության նկարագրություն՝** պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով պայմանագրի `փոփոխության կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրն ամբողջությամբ լուծվելու պահանջները:

**Փոփոխության հիմնավորում՝** «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետ

**Փոփոխության պատճառ 2 `** գնման ժամանակացույցում առկա տեխնիկական վրիպում:

**Փոփոխության նկարագրություն՝** գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2014 թվականի նոյեմբեր ամիսը որը փոխարինվել է 2014 թվականի 4-րդ եռամսյակով:

**Փոփոխության հիմնավորում՝** «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Խնկիանոս Վարդանյանին:

Հեռախոս՝ 099 - 077567:

Էլ. փոստ՝ armvardand@mail.ru :

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին ըստ ցանկի

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **ՀՀ Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի** կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>>-ի և Ձեր կազմակերպության միջև կնքված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրում նշված դիզելային վառելիք՝ **2800/երկու հազար ութ հարյուր** /լիտր: Ապրանքի մատակարարման պայմանները սահմանվում են կից ներկայացվող պայմանագրի նախագծով: Պահանջվում է նշել նաև, թե որքան ժամանակ է ուժի մեջ գնառաջարկը:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Շիրակի մարզի **<<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ** (դպրոցի հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ,գյուղ Բավրա հեռ: 099-077567, էլ.հասցե armvardand@mail.ru) հասցեով մինչև **2014 թվականի հոկտեմբերի 28-ը, ժամը 16.00 -ն:**

Հայտերը կբացվեն ՀՀ Շիրակ մարզի Բավրայի միջնակարգ դպրոցում **2014 թվականի հոկտեմբերի 28 -ին, ժամը 16.00-ին:**

Գնային առաջարկը ներառում է գինը և մասնակցի հայտարարությունը, որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանությունը և գրանցման պահից հետո դրանց առկայությունը, ինչպես նաև տեխնիկական հատկանիշները: Խնդրվում է օրենքով սահմանված կարգով տեղեկացնել Ձեռք բերվող ապրանքի տեսակի, առաքման պայմանների ու ժամանակի մասին, ինչպես նաև ապրանքի գինը տարաներով առաքման դեպքում: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով /հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում <<Շրջանակային համաձայնագրեր>> բաժնի <<Հրավերում կատարված փոփոխություններ >> ենթաբաժնում / :

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝ նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով, հիմք ընդունելով օրենքի 31-րդ հոդվածի պահանջները: Նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

<u>*«ԳԱԿ- ՇՅԱՊՁԲ-11/1»ծածկագրով*</u>
<u>*Շրջանակային ընթացակարգի հրավերի*</u>
<u>*«ԳԱԿ- ՇՅԱՊՁԲ-11/1-ՀՀ ՇՄ ԲՄԴ-2 »ծածկագրով*</u>
<u>*Շրջանակային ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*</u>

# ԴԻՄՈՒՄ
## Շրջանակային ընթացակարգին մասնակցելու

________________________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) <u>Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կողմից <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀՇՄԲՄԴ-2>></u> ծածկագրով հայտարարված

ընթացակարգի________________________________________ չափաբաժնին

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտարարված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2. համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

________________________________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

________________________________________:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

____________________________________________________________ ________________________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) ( ստորագրությունը )

Կ.Տ.

«____» __________________ 2014թ.

«ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՇՄ ԲՄԴ-2» ծածկագրով
Շրջանակային ընթացակարգի հրավերի
«ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՇՄ ԲՄԴ-2» ծածկագրով
Շրջանակային ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Գնիառաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀՇՄԲՄԴ- 2» ծածկագրով շրջանակային ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,.......................................................-ն առաջարկումէ պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալգներով.

(ՀՀդրամ)

| Չափա-բաժիններիհամարները | Ապրանքիանվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկվածգինը /տառերովևթվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | Դիզ .վառելիք | | | |

**3-րդսյունակումնշված,Արժեքըներառում է ինքնարժեքը և շահույթը:*

*** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվումէ 4-րդսյունակում:*

_______________________________________________ Մասնակցիանվանումը (անունը) (ղեկավարիպաշտոնը՝ ԱնունԱզգանունը)

_______________ (ստորագրությունը)

Կ. Տ.

_______________________2014թ.
(ամսաթիվը՝ ամիսը)

նախագիծ

«ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀՇՄ ԲՄԴ-2» *ծածկագրով*

*շրջանակային ընթացակարգի հրավերի*

# ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՇՄ ԲՄԴ-2»

ՇՄ գ.Բավրա <<…….>><<…………….>> 2014 թ.

ՀՀ Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ -ն, ի դեմս տնօրեն Արմեն Վարդանյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<________________>>-ն, ի դեմս տնօրեն ________________ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանւագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1.Վաճառողը պարտավորվում էսույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր /սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույնպայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագրով նախատեսված Վառելիք /այսուհետ՝Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքյին օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու ճրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ

անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ________________________(______________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում:Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցներընախատեսված են,
սակայն ոչ ուշ քան 2014 թ.-ի դեկտեմբերի 25-ը:

## 5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու .օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել 1 տարվա ընթացքում:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով ՀՀ Ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 հավելվածները՝ բաղկացած ..... թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Գ Ն Ո Ր Դ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| ՀՀ Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ | ____________ |
| ՀՀ 220275140105300 ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Աշոցքի մ/ճ | ____________ |
| ՀՎՀՀ 05805134 | ____________ |
| Դպրոցի տնօրեն _ Արմեն Վարդանյան ____________ | ____________ |
| (ստորագրությունը) Կ.Տ. | (ստորագրությունը) Կ.Տ. |

Հավելված N 1
<<.......>><<..................>> 2014 թ. կնքված
N **«ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1-ՅՅՇՄ ԲՄԴ -2»** *ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔ

| N | Տեխնիկական բնութագրի տարրերը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1. | Դիզելային վառելիքի տեսակը | Ավտոմոբիլային ձմեռային դիզելային վառելիք |
| 2. | Հիմնական տեխնիկական ցուցանիշները | Ցետանային թիվը ոչ պակաս 47.0 ,800-840 կգ/մ խոր. |
| 3. | Տեսքը | Մաքուր և պարզ |
| 4. | Ստանդարտ | ՀՀ Կառավարության որոշում 16.06.2005թ.թիվ 894-Ն տեխնիկական կանոնակարգ |
| 5. | Պայմանական նշաններ | <<Վախենում է կրակից>> |
| 6. | Մատակարարումը | Տարաներով , ոչ կտրոնային |

| Գ Ն Ո Ր Դ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| ՀՀ Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ | ______________________ |
| ՀՀ 220275140105300 ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Աշոցքի մ/ճ | ______________________ |
| ՀՎՀՀ 05805134 | ______________________ |
| Դպրոցի տնօրեն _ | ______________________ |
| Արմեն Վարդանյան ______________ | ______________________ |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 2
<<…>><<…………….>> 2014թ.կնքված
N«ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀՇՄ ԲՄԴ-2» *ծածկագրով գնման պայմանագրի*

ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2014թ.4-րդ եռամսյակի ընթացքում | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չ/Մ | Միավորի գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 12 |
| 1 | Դիզ .վառելիք | լիտր | | 2800 | -- | 2800 | - |

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ | ________________ |
| ՀՀ 220275140105300 ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ | ________________ |
| ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Աշոցքի մ/ճ | ________________ |
| ՀՎՀՀ 05805134 | ________________ |
| Դպրոցի տնօրեն _ | |
| Արմեն Վարդանյան ________________ | ________________ |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3
<<.......>><<.................>> 2014թ.կնքված
N **«ԳԱԿ- ՇՅԱՊՁԲ-11/1-ՅՅՇՄ ԲՄԴ-2»** *ծածկագրով գնման պայմանագրի*

Կատարող
______________________________
______________________________
գտնվելուվայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելուվայրը ______________
հհ___________________________
______________________________
հվհհ__________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>><<____________________>>2014թ.

Պայմանագրի անվանումը՝ ____________________________________________________________
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝<<____>><<____________________>> 2014թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________________________
և Կատարողը՝ ի դեմս__________________________________________________________,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին ՝կազմեցին սույն արձանագրությունը հետևյալ մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 2014թ-ից __ _________ 2014թ.ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ չմասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.